

**ՎԱՌԱՆ ՄԱՂԱՎՅԱՆ
«Երևանի համալսարան» թերթի գլխավոր իսլամիկ**

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Երևանի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողությունը նոյեմբերի 18-ին բարերախսություն ունեցան սեփական հարկի ներքո հյուրընկալելու Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Առիթը Վեհափառ Նոր զահակալության 5-րդ փարենարձն էր: Հանդիպմանը մասնակցում էին նաև բարձրասդիման հոգևորականներ ու եկեղեցական գործիչներ, մամուլի, ռադիոյի և հեռուստագործության թղթակիցներ, հյուրեր:

ԵՊԴ ռեկրու, ակադեմիկոս Ռ. Մարգիրոսյանը, իր բացման խոսքում շերմորեն ողջունելով Վեհափառին մայր համալսարան այցելելու առթիվ և հանգամանորեն անդրադանալով նրա գործունեությանը զահակալության հիմք դարձների ընթացքում, մասնավորապես ասաց.

«Վերջերս լրացավ Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման և զահակալության հիմք դարձն: Այդ առիթով խնդրեցինք Վեհափառ Հայրապետին՝ այցելելու Երևանի պետական համալսարան: Թոյլ փվեք բոլորիս անոնից ջերմորեն ողջունել Վեհափառ Նորը հայոց մայր կրթօջախուում:»

Միանգամից նշեմ,- շարունակեց ռեկրու,- որ Վեհափառ Հայրապետի զահակալության անցած հիմք դարձների ընթացքում մեծածավալ աշխարհանքներ են կատարվել: Անավասիկ դրանցից մի քանիսը: Ամենայն Հայոց 132-րդ Կաթողիկոսի զահակալության սկիզբը համընկալ մեր Եկեղեցու գործունեության ամենապարասխանագույն շրջանին: Ամենից առաջ դա Հայասպանում Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակն էր, մի հորեւյան, որն ուներ բարդ և ընդգրկուն միջոցառումների հարուստ ծրագիր: Այնուհետև՝ բազում նախաձեռնություններ և միջոցառումներ, որոնցից են՝ միջնեկեղեցական կապերի ընլլայնում, հովվապետական այցելություններ, հոգևոր և ազգային խնդիրներին նվիրված գիտաժողովներ, Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի սրբեղում, երջանկահշարակ Գարեգին Ա Կաթողիկոսի անվան գիտական կենտրոնի հիմնադրում, ուսումնական գործունեություն, նոր պարբերականների երաժշտական ծեսնարկում և այլն, և այլն:

Վեհափառի նախաձեռնությամբ և աջակցությամբ իրագործվեցին ազգանպաստ բազում ծրագրեր,- շարունակեց ռեկրու,- իրականացվեցին 25 նոր եկեղեցների կառուցման և հների վերանորոգման աշխարհանքները, ընդլայնվեցին Մայր Աթոռի փարածքները, ավարտվեց Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի համալիրի շինարարությունը, հիմնվին վերակառուցվեց և վերականգնվեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանը: Զերնարկումների շարքում ուրույն դեղ ունեն բարեգործական ճաշարանների հիմնումը, մանկական ճամբարների, նոր հիվանդանոցի կառուցումը, «Շողակաթ» հեռուստագործությայի սրբեղումը և այլն:

Շաբ ենք կարևորում Վեհափառ Հայրապետի գործունեությունը հարկավես ուսումնական և գիտական ասպարեզում: Ինչպես գիտեք,- շեշտեց ունկիոր,- Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախաձեռնությամբ Հայաստանի հանրակրթական դպրոցներում իրականացվում է՝ «Հայոց Եկեղեցու պարմություն» առարկայի դասավանդումը համապատասխան շրեն դասագրքերով:

Կրթության հանդեպ Վեհափառ Հայրապետի նախաճախնդրության արդահայրություններից է նաև այն,- ավելացրեց Երոյթ ունեցողը,- որ Երիտասարդ հոգևորականների մասնագիտական բարձր պարբռասպավածության նպագրակով կազմակերպվում է նրանց գործուղումը աշխարհի գործեր համալսարաններ, ինչպես նաև մեր համալսարան: Շաբ կարևոր նախաճեռնություն է հոգևոր սպասավորների շարքերն արագ համարելու նպատակով քահանայական երկամյա լսարանի սրենդումը, որ ուսումնառության են զայս բարձրագույն կրթություն ունեցող Երիտասարդներ: Կարևոր իրադարձություն է Գևորգյան Հոգևոր Ծնննարանի նաև Կորպվածարանական համալսարանի կարգավիճակ սրբանալը»:

Անդրադառնալով հայագիտության զարգացման գործում Էջմիածնի խաղացած ներին՝ ունկիոր նշեց, որ այդ գիտաճյուղը միշտ է եղել է Հայոց Եկեղեցու հոգածության առարկա: Այդ բնագավառում լուրջ և հեփսողական ուսումնասիրությունների կազմակերպման ուղղությամբ հիմնավոր քայլեր եր ձեռնարկել Երջանկահիշագրակ Գարեգին Ա Կաթողիկոսը: Դրանք ավարտին հասցեցին Գարեգին Բ-ի զահակալության օրոք: Սրբեջծվել է «Գարեգին Ա» հայագիտական և ասպվածարանական կենտրոնը, որի գրադարանն այսօր ունի ավելի քան 30.000 կտոր գրականություն, որից 200-ը՝ հնագիտական:

Գարեգին Բ Կաթողիկոսի զահակալության անցած հինգ փարիների ընթացքում բարձր մակարդակով կազմակերպվեցին մի շարք գիտաժողովներ, ինչպես, օրինակ, 2000 թ. հրավիրված «Քրիստոնեություն և իրավունք» թեմայով գիտաժողովը, Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հոչակելու և Սուրբ Էջմիածնի հիմնադրման 1700-ամյակներին նվիրված միջազգային գիտաժողովը, Գրիգոր Նարեկացու «Մարյան ողբերգության» պուեմի 1000-ամյակի առթիվ հրավիրված գիտաժողովը, 2003-ին անցկացված «Հովհաննես Օծնեցին և իր ժամանակը» թեմայով գիտաժողովը:

Վեհափառ Հայրապետի օրինությամբ և աջակցությամբ եր դարձյա, որ Երևանում 2003 թ. սեպտեմբերին Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի համարենգ ջանքերով կազմակերպվեց Հայագիտական միջազգային առաջին համաժողովը, որին կարդացված գեկուցումներն ընդգրկող մեծածավակ հավորող լույս կրեսնի մոտ օրերս: Գիտական աշխատանքների հրապարակման առումով մեծ դեր ունի նաև «Էջմիածն» ամսագիրը, ավելացրեց ակադ. Ռ. Մարտիրոսյանը: Նա նշեց նաև, որ Մայր Այոռ Սուրբ Էջմիածնի և ԵՊՀ-ի միջև եղած կապերն ու համագործակցությունն արդեն 85 փարփառ պարմություն ունեն: Այդ ընթացքում հայ գիտության ու մշակույթի երկու կենտրոնները միշտ աջակցել ու սպառարև են միմյանց՝ ի փառ մեր ժողովոյի հոգևոր արժեքների պահպանման ու հարստացման:

«Հարգելի ներկաներ,- դիմելով դասիճում գրնվողներին, ակադ. Ռ. Մարտիրոսյանն ասաց,- Վեհափառ Հայրապետը վերջին դասիճում լայնորեն բացել է Սուրբ Էջմիածնի դրույթը մեր միավորականության առջև, որի վառ ապացույցը Վեհարանում հաճախակի

կազմակերպվող միջոցառումներն են՝ նվիրված հայ մշակույթի, գիտության ու կրթության երախտավորներին, ամսագրերի ու նշանակալից դարբեր գրքերի շնորհանդեսներին։ Նման ձեռնարկումները հայ մրավորականությանը ուժ, հավաք և վսրահություն են ներշնչում, նվիրումով, եռանդով ու հասրադակամությամբ գործելով՝ ի փառ մեր հայրենիքի ու ժողովրդի բարօրության։

Իր գնահատանքի խոսքից հետո ակադ. Ռ. Մարտիրոսյանը հայդարարեց մայր կրթացախի գիտակությունը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, իր հայրենասիրական, հասարակական-մշակութային գործունեության և քրիստոնեության քարոզության ասպարեզում ձեռքբերած ակնառու նվաճումների համար, ԵՊՀ պատվավոր դոկտորի գիտական ասրիման շնորհելու մասին։ Ազա նա Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին հանձնեց գիտական այդ բարձր գիտության վկայագիրը։

Շնորհավորելով Վեհափառքին՝ ԵՊՀ դասախոսներ՝ Հայոց պարմության ամբիոնի դոցենտ Պետրոս Հովհաննիսյանը, Ասդրամարանության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ռաֆիկ Վարդանյանն ու Հայ գրականության ամբիոնի վարիչ, պրոֆ. Սամվել Մուրադյանը նշեցին, որ հայոց դպրությունը միշտ է գրնվել Եկեղեցու հովանու ներքո, և նրա Հովկապետին ԵՊՀ պարվավոր դոկտորի գիտական ասրիման շնորհումը կնպաստի Եկեղեցու և համալսարանի հապերի էլ ավելի ամրապնդմանը, ազգանպաստ խնդիրների լուծման ճանապարհին համագեղ գործունեության ծավալմանը։

Այնուհերև հանդիպմանը ներկա համալսարանականներին իր օրենության խոսքն ու պարզամը հեղեղ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ Նորին Սրբությունն իր ուրախությունը հայտնեց Երևանի Պետրական Համալսարանում գրնվելու և բարձր պարզմի շնորհման համար։ Վեհափառ Հայրապետը իր գնահատանքը հայդնեց դասախոսներին իրենց նվիրյալ ծառայության համար, որ իրականացնում են հայորդիների կողրման ու դաստիարակման սրբազն գործում։

Հայոց Հայրապետն անդրադարձավ Հայ Եկեղեցու ներկայիս առաքելությանը, իրականացվող գործունեությանը, Եկեղեցու առջև ծառացած խնդիրներին ու մարդաբավթերներին, երիբասարդների մասնակցությանը Եկեղեցական լյանքին։ «Այսօր նոր ժամանակներ է ապրում Հայ Եկեղեցին Հայաստանի անկախ պետության հովանու ներքո։ Եկեղեցին հրնարակություն է արագել վերակազմակերպելու և շարունակելու իր առաքելությունը մեր լյանքից ներս, որպեսզի վերանորոգված լյանքով կարողանա լիարժեք իր ծառայությունը մարտոցել մեր ազգին ու Հայուններին։ Բայց եկեղեցին քարեղեն կառուց չէ, եկեղեցին հավաքացելու համահարումն է։ Քրիստուի հավաքով միարանված հայ ժողովրդի ամբողջականությունն է։»

... Մեր ու մեր եկեղեցականության շանքերը նպարակառությամբ են հիմնականում եկեղեցական լյանքի ավանդական կառուցների վերակերպմանը, որոնց շնորհիվ Եկեղեցին պիտի կարողանա վերստին իր ամբողջական մասնակցությունը բերել մեր ժողովրդի լյանքին, ներկայություն դառնավ հայորդիների հոգիներից ներս, որպեսզի նորանկախ պետության հիմները ամրուեն հասրադակած լինեն հոգևոր բարոյական արժեքների վրա, որոնք եղածիքն են մեր գոյության, մեր լինելութ-



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՇՏՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՍՏԱՆԻ ՈՒԿԱՅՈՒԹԻՒՆԻ ՊԵՇՏՐԱԿԱՆ ՄԱՐՏԻՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՓՈՒՂ Չ ԱՅՐԱՊԼԱՆԻՐՄԱՆ Է
ԿԱՇԽՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՇՏՐԱԿԱՆ ԴՐԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՓՈՒՂ ԿԱՅԱՎԱՐՈՒԹՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

յան և հարավության: 1700 տարիներ ապրել և հարաբեկ ենք շնորհիվ քրիստոնեան մեր հավատի, այդ հավատից ծնունդ առած և նոյն այդ հավատքով կերպված հղուոր արժեքների:

...Ընդուկ եք Համասարանի մեջ ուսանելու այս մեծ հնարավորությունը, որպեսզի ձեր օգտակար ծառայությունը բերեք մեր ազգին ու Մայր Հայրենիքին, որպեսզի հայորդին ունենա երջանիկ ու ապահով կյանք, հայրենին լինի շնչ, բարգավաճ ու հզոր: Մեր առաքելությունը նոյնապես նպարակառողջված է այս գաղափարների իրազորմանը ազգային մեր կյանքից ներս: Ի՞նչը կարող է մեզ բաժանել, որպեսզի մենք մեկտեղներ մեր քանքերը, վերսպիր համախմբվենք ազգային մեր նվիրական հասրադության՝ Հայոց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարկի ներքո ու առ Ապելված ապավինած՝ միասնաբար դուրս գանք հաշորահարելու այն բոլոր մարդարակիրները, որոնք այսօր ծառացած են մեր Հայրենիքի ու մեր ժողովրդի առջև: Եկեղեցին միայն եկեղեցականությունը չէ, Եկեղեցին հավաքացայլ հայորդին է, հայ ժողովրդի ամբողջությունն է: Ուրեմն Հայրապետին հոդորն ու պարզանն է, որ ձեր հայացքը դարձնեք դեսպի նվիրական սուրբ օգախը հայոց, մասնակցեք, որ ձեր տեղն ու դերը ունենաք հայ եկեղեցական կյանքից ներս և ձեր առաջնորդի ու հովվի հետ բանաք նոր ճանապարհը Հայ Առաքելական Եկեղեցու ապասավորության մեր ազգին և Հայրենիքին»:

Հայրապետական իր պարզամի ավարտին Վեհափառ Հայրը ԵՊԿ ունկնդրին նվիրեց Ս. Էջմիածնի հիմնադրման 1700-ամյակի հորելյանական հուշամեդալ և Մաղաքիա Օրմանյանի «Ազգապարում» աշխարհության քառահարուրը: Ապա Հայոց Հայրապետը պարապիսանեց համալսարանականների բազմաթիվ հարցերին: Իսկ այն հարցին, թե ինչ կարծիքի է Վեհափառն ինքը ժամանակակից հայ երիտրասարդության մասին, Նորին Սրբությունը պարապիսանեց՝ «Ես սիրում եմ ձեզ»:

Հանդիպումն ավարկվեց Տերունական աղոթքով և Հայրապետական օրինությամբ ու մաղթանքով: